ԾԻԼ
ՏՈՒՐ
ՀԱՅԵՐԵՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆԿԱՐԱԳԻՐ

Ծիլը հայ պատանիների համար նախատեսված ստեղծագործական հարթակ է, որի նպատակն է խթանել հայերենի նկատմամբ հետաքրքրությունը, ամրապնդել ստեղծագործական միտքը եւ ստեղծել համահայկական պատանեկան ստեղծագործական ցանց:
Հարթակն իր մեջ ներառում է՝

- «**Ծիլ տուր հայերեն**» **մրցույթ** - պատանիներին տալիս է ստեղծագործական հարթակ հայերենով արտահայտվելու համար, այն կարող է դառնալ լեզվի նկատմամբ հետաքրքրության և սիրո վերականգնման գործիք: Մրցույթը խթանում է ինքնարտահայտման ազատությունը, ստեղծագործական միտքը և միաժամանակ ամրապնդում լեզվի կիրառումը պատանիների միջավայրում: Ներառում է երկու անվանակարգ՝ գրական ստեղծագործություն և տեսողական արվեստ:
- «**Ծիլ տուր**» **աշխատարաններ** - Կարճաժամկետ աշխատարանների (1-ից 3 օր) նպատակն է զարգացնել Հայաստանում բնակվող 13–19 տ. երիտասարդների լեզվական ու ստեղծագործական հմտությունները, նպաստել նրանց ինքնաճանաչմանը:
- **Ծիլ համայնք** - Համայնքում ընդգրված են մրցույթի տարբեր տարիներին մասնակից ավելի քան 50 պատանիներ:

Մրցույթն իրականացվում է «Ամրոց» ազգային զարգացման հիմնադրամի կողմից: Հիմնադրամի առաքելությունն է աշխարհասփյուռ հայ երիտասարդների շրջանում ձևավորել խոր կապ, որպեսզի նրանք հպարտությամբ ընդունեն իրենց ժառանգությունը և փոխանցեն այն ապագա սերունդներին:

ԱՄՐՈՑ

ԾԻԼ ՏՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ

ՆՊԱՏԱԿ

«Ծիլ» ստեղծագործական մրցույթն ամենամյա միջոցառումների շարք է, որի նպատակը հայերենը հայ պատանիների հաղորդակցման հիմնական լեզու դարձնելն է Հայաստանում և Սփյուռքում:
2025թ-ի մրցույթի խորագիրն է «**Իմ անունով երկիրը**», որը հնարավորություն է ընձեռում Հայաստանում եւ սփյուռքում ապրող հայ պատանիներին բացահայտելու իրենց պատկերացումները հայրենիքի եւ պատկանելության մասին եւ տալիս ստեղծագործական ազատություն՝ սեփական աշխարհայացքով երկիրը հասկանալու եւ այդ մասին պատմելու համար:

Ովքե՞ր կարող են մասնակցել

- 14 - 17 տարեկան պատանիներ
- Հայաստանից և Սփյուռքից
- 2022-ի, 2023-ի և 2024-ի մրցույթին մասնակցած, բայց մրցանակային տեղեր չզբաղեցրած մասնակիցները

Անվանակարգեր

1) Ստեղծագրություն
- Արձակ գրական ստեղծագործություն

2) Տեսողական արվեստ
- Պաստառների ձևավորում
- Պատկերապատում (կոմիքս)

3) Օտարագիր (խրախուսական)
- անգլերեն և ռուսերեն ստեղծագործություններ

Ժամանակացույց

- Հոկտեմբերի 1 - 31, 2025թ, հայտերի ընդունում
- Նոյեմբերի 1-ից 30, 2025թ, Ժյուրիի գնահատում
- Փետրվարի 19, 2026 թ, ամփոփիչ միջոցառում, մրցանակաբաշխություն

ԱՄՐՈՑ

ԾԻԼ ՏՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ

Ընդհանուր դրույթներ

- Մրցույթի յուրաքանչյուր մասնակից կարող է մրցել առավելագույնը 1 ուղղվածության մեջ, օրինակ՝ «արձակ ստեղծագործություն»: Մասնակիցը չի կարող միաժամանակ մրցել նույն ուղղվածության երկու անվանակարգերում, օրինակ՝ պաստառների ձևավորում և պատկերապատում:
- Մրցույթին պահանջվող նյութերն ուղարկելով՝ մասնակիցը տեղեկացված է և համաձայն, որ.

ա) Ներկայացվող աշխատանքը ստեղծվել է իր կողմից, առանց կողմնակի մասնակցության և աջակցության: Տեքստային ստեղծագործության պարագայում աջակցությունը կարող է սահմանափակվել բացառապես ուղղագրական և կետադրական սխալների շտկումով:
բ) Ներկայացվող գրական ստեղծագործությունը կամ աշխատանքը նոր են, ստեղծվել են են Մրցույթին ներկայացվելու համար և չեն առաջադրվել որևէ այլ մրցույթի:
գ) «Ծիլ» համայնքը կարող է հրապարակել Մասնակցի ստեղծագործություն(ներ)ը իր կայքում կամ այլուր (ներառյալ թեմատիկ ցուցահանդեսներում)՝ առանց շահ հետապնդելու նպատակների՝ պահպանելով հեղինակի իրավունքները: Մասնակիցները ազատ են հրապարակել, հրատարակել և այլ կերպ օգտագործել Մրցույթում հաղթած իրենց տեղծագործությունները՝ Համայնքի կողմից այն հրապարակելուց հետո:

- Ոչ ամբողջությամբ լրացված և անփութորեն ներկայացված հայտերը չեն ընդունվելու: Մասնակիցները պետք է պահպանեն սահմանված ծավալները և ժամկետները:

ԱՄՐՈՑ

ԾԻԼ ՏՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ

Անվանակարգեր

Արձակ ստեղծագործություն	Պաստառների դիզայն	Պատկերապատում (կոմիքս)
• Մինչև 2000 բառ • PDF ֆայլ • Արևելահայերեն • Արևմտահայերեն • Հայերենի բարբառներ	• Նվազագույնը 1, առավելագույնը 3 պաստառ • PDF ֆայլ • Արևելահայերեն • Արևմտահայերեն • Հայերենի բարբառներ	• Առավելագույնը 15 էջ • PDF ֆայլ • Գունային սահմանափակում չկա • Արևելահայերեն • Արևմտահայերեն • Հայերենի բարբառներ

Մրցանակներ

- Դրամային մրցանակներ՝ կրթական, մշակութային և ժամանցային ուղղություններով կիրառելու նպատակով
- Օտարագիր խրախուսական անվանակարգի դեպքում հայերենը բարելավելու հնարավորություններ
- Հատուկ մրցանակներ

ԱՄՐՈՑ

ԾԻԼ ՏՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ

Գնահատում

- Ժյուրիի յուրաքանչյուր անդամ անանուն ձևով ծանոթանում է իր անվանակարգի մասնակիցների աշխատանքներին(ինկոգնիտո, առանց անձնական տվյալների):
- Ստեղծագործությունները գնահատվում են ըստ անվանակարգերի: Յուրաքանչյուր անդամ առանձնացնում է, իր պատկերացմամբ լավագույն 10 հեղինակներին և գնահատում՝ 1–10 բալով (1՝ ամենացածր, 10՝ ամենաբարձր): Նույն միավորը կարող է տրվել մի քանի մասնակիցների:
- Բոլոր գնահատականների գումարով որոշվում են հարցազրույցի փուլ անցած մասնակիցները: Հարցազրույցն անցկացնում են «Ամրոց» հիմնադրամի հոգաբարձուներն ու ժյուրիի անդամները:
- Ըստ ընդհանուր միավորների և անվանակարգերի՝ սահմանվում են մրցանակային տեղերը. ամենաշատ միավոր ստացածը զբաղեցնում է 1-ին տեղը, հաջորդները՝ մինչև 3-րդ տեղ:

Ժյուրի

- Ընդհանուր ժյուրիի կազմը՝ 9 անդամ:
- Յուրաքանչյուր անվանակարգի համար ձևավորվում է մասնագիտական խումբ. նեղ մասնագետներ + «Ամրոց» հիմնադրամի ներկայացուցիչներ:
- Ժյուրիի անդամները պատասխանատու են աշխատանքների գնահատման և հարցազրույցների անցկացման համար:

ԱՄՐՈՑ

ԾԻԼ ՏՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս պետք է ուղարկել աշխատանքները:
Աշխատանքները ներկայացվում են համապատասխան հայտադիմումին կցված, PDF ձևաչափով: Կցված նիշքը չպետք է պարունակի անձնական կամ անձը հաստատող տվյալներ:

2. Ո՞րն է խորագրի և վերնագրի տարբերությունը:
Խորագիրը՝ «Իմ անունով երկիրը», մրցույթի ընդհանուր թեման է, որի շրջանակներում մասնակիցն ազատ է ընտրել իր ստեղծագործության վերնագիրը և բովանդակային յուրահատուկ գիծը, որը կլինի միայն իրենը:

3. Հնարավո՞ր է մասնակցել թիմով:
Մրցույթի մասնակցությունն անհատական է:

4. Ի՞նչ անել, եթե չունեմ հայերենի բավարար իմացություն:
Այս դեպքում կարելի է մասնակցել «Օտարագիր» անվանակարգին՝ ստեղծագործությունը ներկայացնելով այն լեզվով, որին լավագույնս տիրապետում ես:

5. Եթե աշխատանքը չհաղթի, ի՞նչ ընթացք կունենա այն:
Լավագույն ստեղծագործություններից շատերը հրապարակվում են «Ծիլ» համայնքում կամ գործընկեր ամսագրերում:

6. Հնարավո՞ր է միաժամանակ դիմել երկու անվանակարգի:
Հնարավոր է դիմել երկու տարբեր անվանակարգերի (օր.՝ Ստեղծագրություն և Տեսողական արվեստ), սակայն հնարավոր չէ դիմել նույն անվակարգի երկու տարբեր ճյուղերի (օր.՝ պատկերապատում և պաստառների ձևավորում):

7. Մասնակցության համար որևէ վճար պահանջվու՞մ է:
Ոչ, մասնակցությունն անվճար է:

Կից կարող եք ծանոթանալ մրցույթի վերաբերյալ հաճախ տրվող հարցերին, իսկ այլ հարցերի դեպքում կարող եք գրել Info@amrots.foundation էլ. հասցեին:

ԱՄՐՈՑ